

— Գիւղ մ'էլ առջեւնիս կայ, եւ ժամ մը չի քշեր. ես որ օր առաջ կ'ուզեմ Սասուն դառնալ չեմ կրնար դանդաղիի բայց որպէսզի իմացնեմ թէ Գուրգէն իշխանը սխալ կարծիք մը ունի իմ վրաս, իրեն ընկերակից կը լինիմ եւ կ'իջնեմ գիւղս:

Եւ քանի մը վայրկեան ետքը այս մեր երկու բարեկամները նստած էին կրակին քովի անկիւնը, եւ շատ դիւրութեամբ իրարու կը համոզէին եւ շատ նիւթերու վրայ համամիտ էլ էին, վասնզի երկուքն էլ ապահով էին թէ գարնան Յայաստանի վրայ փոթորիկ կար հասնելու, թէ Յայաստան միահամուռ եւ միահոգի կրնար վանել ոեւիցէ՛ յարձակումն, թէ այդ քանի համար հոգեւորական իշխանութիւնն պէտք էր շարժիլ եւ շարժել, եւ թէ պէտք չէր սպասել բարբարոս թշնամուոյն, որ երկրին կեդրոնը հասնի, այդ խելօք շարժիլ, պէտք էր սահմանագլուխը անցած-չանցած թշնամին դիմաւորել ինչպէս քանի մը տարի առաջ Աղծնեաց պատերազմին մէջ ըրած էին հայք, եւ խորտակեր էին տաճիկը, եւ թէ ո՛վ որ թշնամուոյն հետ բանագնացութեան մտներ, քանի որ նա Յայաստանի գաւառի մը մէջ կը բանակեր, նա էլ թշնամի հայրենեաց պէտք էր համարիլ եւ ամէն մարդ իրաւունք ունենալով ոեւիցէ՛ միջոցաւ զանի անհետացնել:

Այսպէս երկար խօսակցութիւն մը ունենալով այս երկու մարդիկը, համարմունք առին իրարու վրայ եւ խոստացան ոեւիցէ՛ պարագայի մէջ յաջողութեան եւ ձախորդութեան իրարու տեղեկութիւն տալ եւ օգնել: Եւ նոյն գիշերը Բագրեւանդայ աննշան գիւղին մէջ անցընելով, երկրորդ օրը միատեղ ճանապարհորդելէ վերջը մինչեւ Բլուր, ուր իշխանը իւր քեռին պիտի գտներ, Յովնան կը շարունակեր իւր ճամփան՝ կ'անցներ Երասխ, կ'երթար Դուին եւ իմանալով թէ կաթողիկոսն Յովհաննէս ժողով ունէր քանի մը երեւելի նախարարաց հետ, կը փութար ժամ առաջ հասնելու քանի որ չէին ցրուած:

Թեպէտ շատ լուրջ մարդ էր Յովնան եւ երկայն տարիներու փորձն ու տառապանք զինք ամէն արկածից դէմ ամրացուցեր էին, բայց